Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

BY NC SA

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3353

ЗКСМ
Z - 21

1923

ЗКСМ
2-21

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏ. ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Կոմսոմոլի գրադարան № 4.

21

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

# УСТАВ

## РОССИЙСКОГО КОММУНИСТИЧЕСКОГО СОЮЗА МОЛОДЕЖИ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Կ. ՅԵ. ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ
ՅԵՐԵՎԱՆ

Տրեստի Առաջին տպարան — 1923

2010
2001

329.154
Ռ-91

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏ. ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Կոմսոմոլի գրադարան № 3.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

# УСТАВ
## РОССИЙСКОГО КОММУНИСТИЧЕСКОГО СОЮЗА
## МОЛОДЕЖИ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Կ. ՅԵ. ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ
ՅԵՐԵՎԱՆ

Երևանի Առաջին տպարան—1928

Պուբլիչնայա Բիբլիոտեկա
6907-57

10835

# Ռ. Կ. ՅԵ. Մ. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(Յերիտ. Կոմինտերնի մասնաճյուղ—սեկցիա)

## Ա. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԵՌԱՑՈՒՄԸ

*1. Ռ. Կ. Յե. Մ. անդամ ճանաչվում ամեն մի 14-23 տարեկան յերիտասարդ, վորը ընդունում է միության ծրագիրը և կանոնադրությունը, աշխատում է նրա վորևէ կազմակերպության մեջ, յենթարկվում միության բոլոր վորոշումներին և վճարում է անդամավճար:*

**Ծանոթ.**— *Միության անդամները, վորոնք դառնում են 23 տարեկան կարող են մնալ կազմակերպության մեջ վորպես պասիվ անդամներ (այսինքն խորհրդակցական ձայնի իրավունքով)․ բայց յեթե նրանք ընտրվում են մի վորևիցե ղեկավարող որգանի մեջ, ստանում են վճռական ձայնի իրավունք:*

*2. Ռ. Կ. Յե. Մ. մեջ անդամ կամ թեկնածու ընդունելու կարգը հետևյալն է. ա) բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը ընդունվում է միության անդամ առանց թեկնածուական ստաժի և յերաշխավորությունների. բ) իբրև թեկնածուներ միության մեջ ընդունվում են վոչ պրոլետարական ծագում ունեցող, սովորող (աշակերտ) յերիտասարդները և գրասենյակային ծառայողները, գ) թեկնածուների համար սահմանվում է մի տարվա թեկնածուական ստաժ, դ) թեկնածուների ընդունելությունը կատարվում է կուսակցության կամ Կ. Յե. Մ. յերկու անդամների յերաշխավորությամբ, վորոնք ունեն վոչ պակաս 2 տարվա ստաժ:*

**Ծանոթ.**—I. *Թեկնածուները յենթարկվում են միության բոլոր վորոշումներին, կատարում են միության անդամի բոլոր պարտականությունները և օգտվում են ժողովներում խորհրդակցական ձայնի իրավունքով:*

**Ծանոթ**—II. *Յերաշխավորները պատասխանատու յեն իրենց յերաշխավորությունների համար և յենթարկվում են համապատասխան պատասխանատվության, մինչև միությունից հեռացվելը, յեթե յերաշխավորությունը անհիմն է լինում:*

Ծանոթ. — III. Միության մեջ ընդունվելու դիմում տվող ընկերների ցուցակները նախօրոք կախվում են, վորոշ ժամանակով, ձեռնարկության կամ հիմնարկության մի ակնբախ տեղ, վորի ընթացքում կարող են տրվել այդ ընկերների մասին զանազան հայտարարություններ: Յերաշխավորների ստուգումը կատարվում է ընդունելությունից առաջ տեղական կոմիտեյի կամ բջջի քարտուղարի կողմից, խնդիրները առաջին հերթին քննվում են բջիջում և ապա բջջի վորոշումը տրվում է գավառային կոմիտեներին ի հաստատություն, իսկ գավառային կենտրոնում անմիջապես գավկոմին:

3. Ամեն մի կազմակերպության անդամ, յերբ տեղափոխվում է մի ուրիշ, շրջան համարվում է նույն շրջանի կազմակերպության անդամ:

4. Միությունից հեռացվում են նրանք, վորոնք խախտում են Ռ. Կ. Յե. Միության ծրագիրը և կանոնադրությունը, (միության դիսցիպլինայի խախտման և միության անդամի անվայել վարք ու բարքի համար):

5. Անդամների արտաքսումը կատարվում է այն բջիջի միջոցով, վորի անդամ է նա և տրվում է ի հաստատություն կոմիտեյի. արտաքսվողին վերապահվում է իրավունք բողոքել ավելի բարձր միության մարմիններին:

Ծանոթ. Այն անդամները, վորոնք առանց հարգելի պատճառի չեն հաճախում ժողովները, կամ չեն մուծում 3 ամսվա անդամավճարները արտաքսվում են միությունից առանց բջջի վորոշման, մեքենայաբար:

6. Արտաքսված անդամների մասին անմիջապես հայտարարվում է միության մամուլում և հայտնվում է համապատասխան ղեկավար օրգաններին:

## Բ. Ռ. Կ. ՅԵ. Մ. ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Լինել Կոմյերիտմիության անդամ դա մեծ պատիվ է ամեն մի յերիտասարդ բանվորի և գյուղացու համար, Ռ.Կ.Յե.Մ. ամեն մի անդամ իր վարք ու բարքով և աշխատանքով, թե միության մեջ և թե միությունից դուրս պետք է արդարացնի իր ոչումը, բարձր պահի իր կազմակերպության պատիվը և կոմունիստական կարմիր դրոշը: Կոմ. Յե. Մ. բոլոր անդամները պետք է հիշեն, վոր նրանք հանդիսանում են Ռ. Կ. Կ. ապագա անդամները և պատրաստվում են վորպեսզի արժանիորեն կատարեն այդ մեծ և դժվար պարտականությունը:

8. Ամեն տեղ և ամենուրեք Խորհրդային հանրապետության



գործարաններում, գյուղական տնտեսություններում, Կարմիր Բանակում, պետական վորևե աշխատանքում Կոմյերիտմիության անդամը պետք է լինի առաջիններից առաջինը, ամենից աշխատասերը, յեռանդունը, ազնիվը և քաջը ու օրինակ ծառայի մյուս յերիտասարդներին և աշխատավորներին:

9. Ամենուրեք վորտեղ հնարավոր է Կ. Յե. Մ. անդամը օգնում է Խորհրդ. Իշխանությանը և Կ. Կուսակցությանը՝ նոր հասարակության կառուցելու աշխատանքներում պայքարում է բուրժուազիայի և նրա կողմնակիցների, բուրժուական ազդեցության, օրգանների խախտման, ժողովրդական ունեցվածքի թալանման և բյուրոկրատիզմի դեմ:

10. Ամեն մի միության անդամ պետք է լավ յուրացնի միության ծրագիրն ու կանոնադրությունը, ըմբռնի բանվոր դասակարգի, Խ. Իշխանության և Կ. Կ. խնդիրները, պետք կարող լինի այնքան, վոր հասկանա հանրապետության և համաշխարհային ընթացիկ անցքերը և այդ ամենը բացատրի մնացած յերիտբանվորներին և բոլոր աշխատավորներին:

11. Կ. Յե. Միության ամեն մի անդամ ակտիվ մասնակցություն է ցույց տալիս միության բոլոր աշխատանքներին, կանոնավոր հաճախում է ժողովներին և սեփական պարապմունքներին, ձգտում է սովորել ըստ կարելվույն շատ գիտություն. վորը անհրաժեշտ է կոմ. հասարակարգի կառուցման համար և ակտիվ մասնակցություն է ցույց տալիս այն քաղաքական կամպանիաներին, վորոնք անց են կացվում Կ. Կ. կամ Կ. Յե. Մ. կողմից:

12. Միության ամեն մի անդամ, վորը աշխատում է վարձով պետք է լինի իր պրոֆմիության անդամը:

13. Ամեն մի միության անդամ պարապում է սպորտով և ֆիզիքական մարզանքով, հիշելով վոր բանվոր դասակարգին հարկավոր են ֆիզիքապես առողջ, ուժեղ, առույգ աշխատողներ և պայքարողներ կոմունիզմի համար:

14. Կ. Յե. Մ. ամեն մի անդամ կրում է Կոմյերիտ. Ինտերնացիոնալի նշանը հիշելով, վոր նա հանդիսանում է յերիտասարդական պրոլետարական միջազգային մեծ բանակի անդամ:

## Գ. Ռ. Կ. ՅԵ. Մ. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

15. Ռ. Կ. Յե. Միությունը հիմնվում է դեմոկրատական կենտրոնացման սկզբունքի և արտադրողական տերիտորիալ հիմունքների վրա: Այն կազմակերպությունը, վորը ղեկավարում է մի վորևե շրջան (առյոն) համարվում է բարձր օրգան շրջանի մասերի կազմակերպությունների: Կ. Յե. Մ. ղեկավար օրգանները ընտրովի յեն

և հաշվետու բոլոր աշխատանքների համար իրենց ընտրող որգանների առաջ։ Ստորին որգանները յենթարկվում են բարձր որգանների բոլոր վորոշումներին։

16. Յուրաքանչյուր կազմակերպության բարձր ղեկավարող որգանը հանդիսանում է պատգամավորական ժողովը, կոնֆերանսը կամ համագումարը։

17. Պատգամավորական ժողովը, կոնֆերանսը կամ համագումարը ընտրում են կոմիտե, վորը հանդիսանում է գործադիր մարմին և ղեկավարում է կազմակերպության ընթացիկ բոլոր աշխատանքները։

18. Կոմիտեներին կից, զանազան աշխատանքները տանելու համար, կազմակերպվում են համապատասխան բաժիններ, հանձնաժողովներ և բյուրոներ (քաղաքա-լուսավորական, տնտեսական, ազգային փոքրամասնությունների և այլ աշխատանքների)։ Բաժինները յենթարկվում են կոմիտեյին, համարվում են նրա օժանդակիչ որգանները և անց են կացնում նրա վորոշումները։

## Դ. ԲՋԻՋՆԵՐԸ

19. Այն բջիջի կազմը, վորը 3 հոգուց պակաս չէ, հաստատվում է գավառային կամ շրջանային կոմիտեների կողմից։

20. Բջիջը հանդիսանում է միության հիմնական կորիզը և իրեն է կապում բանվորա-գյուղացիական յերիտասարդության լայն մասսաները. բջիջները կազմակերպվում են արդյունաբերական ձեռնարկություններում, գյուղերում, դպրոցներում և պրոֆմիություններում։ Բջիջի խնդիրներն են ա) տվյալ հիմնարկության կամ ձեռնարկության Կ. Յե. Մ. անդամների համախմբումը և շաղկապումը. բ) միությունից դուրս գտնված յերիտասարդության վրա ուժեղացնել Կ. Յե. Միության ազդեցությունը. գ) նոր անդամների գրավումը. դ) ակտիվ մասնակցություն ունենալ ձեռնարկության, գյուղի և դպրոցի կյանքում ու շինարարական աշխատանքներում. ե) ձեռնարկության յերիտասարդության տնտեսական բարելավումը. զ) կուլտուր-կրթական, աշխատանքներ տանել իր անդամների մեջ. յե) մասնակցություն ունենալ այն քարոզչական կամպանիաներին, վորոնք անցկացվում Միության, Կուսակցության և Խ. իշխանության կողմից. ը) օգնել Միության ղեկավարող որգաններին նրա աշխատանքների շրջանում։

21. Բջիջը իր ընթացիկ աշխատանքները տանելու համար 3 ամիս ժամանակամիջոցով ընտրում է 3 հոգուց բաղկացած բյուրո։

22. Բջիջը յերկու շաբաթ մի անգամ զեկուցում է իր աշ-



խատանքների մասին շրջանային կոմիտեյին, գավառային կենտրոնում քաղաքային կոմիտեյին։

## Ե. ՖՐԱԿՑԻԱՆԵՐԸ

23. Դեռ զինակոչի չենթարկված յերիտասարդների զինական հրապարակներում, կլուբներում և այլն, յեթե այդտեղ կան 3 հոգուց վոչ պակաս միության անդամներ, կազմակերպվում են Լ. Կ. Յե. Մ. ֆրակցիաներ. Ֆրակցիայի խնդիրներն են՝ տանել կուլտուր-կրթական աշխատանքներ տվյալ հիմնարկության յերիտասարդության մեջ, տարածել և ապահովել միության ազդեցությունը նրա վրա, որինակ դառնալ մյուս յերիտասարդներին դիսցիպլինա սահմանելու ու հրապարակային և ակումբային աշխատանքներին ուղիղ հաճախելու։

**Ծանոթ.**— Դպրոցներում, վորտեղ սովորողների բացարձակ մեծամասնությունը կազմում են յերիտասարդ բանվորներ և գյուղացիներ, կարելի յե կազմակերպել բջիջներ տեղական կոմիտեների հայեցողությամբ։

24. Լ. Կ. Յե. Մ. ֆրակցիային չի վերապահվում անդամներ ընդունելու և կոնֆերանսի համար պատգամավորներ ընտրելու իրավունք։

25. Ֆրակցիայի բոլոր անդամները պարտավոր են լինել մի վորևե բջիջի անդամ։

26. Ֆրակցիայի գործադիր որգանը հանդիսանում է բյուրոն կամ քարտուղարը, վորը ընտրվում է ֆրակցիայի ընդհանուր ժողովում և հաշվետու յե վերջինիս։

## Զ. ՇՐՋԱՆԱՅԻՆ (ՌԱՅՈՆԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

27. Միության բոլոր բջիջները, վորոնք գտնվում են շրջանային տերիտորիայի վրա (նահանգական կամ գավառային քաղաքներում), պատգամավորական ժողովում ընտրում են կոմիտե, կազմում են շրջանային (ռայոնական) կազմակերպություն։

28. Պատգամավորական ժողովը համարվում է բարձրագույն ղեկավար որգանը շրջանային (ռայոնի) տերիտորիայի վրա։ Պատգամավորական ժողովը քննության է առնում միության աշխատանքները և այն հարցերը, վորոնք վերաբերում են տեղական կազմակերպությանը և կամ բարձրացվում են ղեկավարող որգանների կողմից։ Լսում են բարձրագույն ղեկավար որգանների զեկուցումները և նույնպես ընդհանուր հարցերը ընթացիկ քաղաքական կյանքի և խորհրդային շինարարության մասին. ընտրում են կոմիտե,

լսում են և հաստատում հաշվետվությունը, նրա և կոմիտեների աշխատանքների ծրագիրը և ուղղություն են տալիս բջիջների աշխատանքներին։

24. Կոմիտեն ընտրվում է պատգամավորական ժողովի կողմից վոչ պակաս 6 ամիս ժամանակամիջոցով։

## Է. ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ՅԵՎ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

30. Նահանգական կոնֆերանսը հրավիրվում է տարին մի անգամ, իսկ գավառայինը 6 ամիսը մի անգամ։

**Ծանոթ.**— Նահանգական կոմիտեյի վորոշմամբ կամ գավառային կոմիտեների 1/3 պահանջով կարող են կանչվել արտակարգ նահանգական կոնֆերանսներ, իսկ գավառային կոնֆերանսներ բջիջների 1/3 պահանջով կամ գավառային կոմիտեյի վորոշմամբ։

31. Նահանգական և գավառային կոնֆերանսները լսում և հաստատում են համապատասխան կոմիտեների հաշվետվությունը. քննում են յերիտասարդական շարժման վերաբերյալ հարցերը և ընտրում են կոմիտե։

32. Գավառային կոնֆերանսները քննում են նահանգական կոնֆերանսների որակարգի հարցերը և ընտրում են նրա համար պատգամավորներ։ Նահանգական կոնֆերանսները համառուսական համագումարի համար պատրաստում են հարցեր և ընտրում են նրա համար պատգամավորներ։

33. Նահանգական կոմիտեները ընտրվում են նահանգական կոնֆերանսներում 11—15 անդամներից բաղկացած, գավառայինները 7—11 անդամներից գավառային կոնֆերանսներում և հանդիսանում են ղեկավարող որգաններ մինչև հետևյալ կոնֆերանսը։

34. Նահանգական կոմիտեների պարտականությունն է՝ ղեկավարել և հրահանգել գավառային կոմիտեներին և տեղական կազմակերպություններին ու կիրառել կյանքում համառուսական համագումարի վորոշումները՝ միության ներկայացուցիչներ ունենալու նահանգական կազմակերպություններում, հիմնարկություններում և հաստատել նոր կազմվող կազմակերպությունները։

35. Գավառային կոմիտեների պարտականությունն է տեղական կազմակերպություններին ղեկավարել նրանց աշխատանքների շրջանում, ստեղծել և հաստատել նոր կազմակերպություններ, հրահանգել և ինֆորմացիա տալ գոյություն ունեցող կազմակերպություններին և ուղղություն տալ նրանց աշխատանքներին։ Ունենալ ներկայացուցիչներ գավառային կուսակցական, խորհրդային կազմակերպություններում և հիմնարկություններում։



36. Կոմիտեյի վորոշումները կիրառելու և ամենօրյա աշխատանքները ղեկավարելու համար, նահանգական և գավառային կոմիտեները, իրենց կազմից ընտրում են 5 հոգուց բաղկացած բյուրո։

37. Նահանգական և գավառական կոմիտեների քարտուղարները պետք է ունենան կուսակցական և միութենական ստաժ, նահանգական կոմիտեների քարտուղարները, վորոնք ինտելիգենտ են պետք է ունենան 3 տարվա միութենական և 2 տարվա կուսակցական ստաժ, բանվորները 2 տարվա միութենական ստաժ, իսկ գյուղացիների համար միութենական և կուսակցական 2 տարվա ստաժ գավառային կոմիտեների քարտուղարները, վորոնք ինտելիգենտ են պետք է ունենան 2 տարվա միութենական և 1 տարվա կուսակցական ստաժ, բանվորները մի տարվա միութենական ստաժ, իսկ գյուղացիների համար 1 տարվա միութենական և 1 տարվա կուսակցական ստաժ։ Այն քարտուղարները, վորոնք դուրս են յեկել գյուղական միջավայրից, նրանց ստաժները կարելի յե հավասարեցնել բանվորների ստաժին, յեթե նրանք անմիջապես կապ են ունեցել գյուղական ֆիզիքական աշխատանքների հետ։ Բացառիկ պայմաններում կարելի յե ստաժները իջեցնել բարձր ղեկավարող որգանների թույլտվությամբ։

## Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԸ

38. Ռ.Կ.Յե.Մ. բարձրագույն ղեկավարող որգանը հանդիսանում է համառուսական համագումարը, վորը հրավիրվում է Կ. Կոմիտեյի կողմից առնվազն տարին մի անգամ։

**Ծանոթ.**— Արտակարգ համագումարներ կարող են հրավիրվել նահանգական կոմիտեների 1/3 պահանջմամբ կամ Կ. Կ. վորոշմամբ։

39. Համագումարը լսում և հաստատում է Կ. Կոմիտեյի հաշվետվությունը, հաստատում է միության ծրագիրը և կանոնադրությունը։ Ընդգծում է յերիտասարդական շարժման ընդհանուր գիծը և նրա հերթական խնդիրները։ Ընտրում է Կ. Կոմիտե։

40. Համառուսական համագումարից մինչև մյուս համագումարը միության բարձրագույն որգանը հանդիսանում է Կենտրոնական Կոմիտեն։

41. Կենտրոնական Կոմիտեյի կազմը վորոշում է համագումարը, Կ. Կոմիտեյի անդամների մեկնումեկի բացակայության դեպքում նրա կազմը լրացվում է համագումարի կողմից ընտրված թեկնածուներից ըստ հերթի։

42. Կենտրոնական Կոմիտեն ուղղություն է տալիս բոլոր աշխատանքներին, ներկայացուցիչ է նշանակում պետական հիմնարկություններում և կազմակերպություններում, հրատարակում է միության կենտրոնական օրգանը։

43. Կենտրոնական Կոմիտեն նախապատրաստում է համառուսական համագումար, վորոշում է ներկայացուցչական նորման, գծում է համագումարի օրակարգը։

44. Վոչ հաճախ ամիսը մի անգամ հրավիրում է Կ. Կոմիտեյի պլենար նիստեր։

45. Տեղերի հետ առնչություն ունեցող խնդիրները լուծելու համար, 6 ամիսը մի անգամ, Կ. Կոմիտեն հրավիրում է Կ. Յե. Մ. համառուսական կոնֆերանս նահանգական կոմիտեների ներկայացուցիչներից։

46. 3 ամիսը մի անգամ Կ. Կոմիտեն նահանգական կոմիտեներին ուղարկում է իր գործունեության մասին հաշվետվություն, դնում է ինֆորմացիոն դեկուցումներ նահանգական կոնֆերանսներում և լուսաբանում է իր աշխատանքները մամուլում։

## Թ. Ռ. Կ. ՅԵ. Մ. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ Ռ. Կ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ

47. Վորպեսզի Ռ. Կ. Կուսակցությունը միության վրա ունենա ընդհանուր ղեկավարություն Ռ. Կ. Յե. Մ. Կ. Կ. անմիջապես յենթարկվում է Ռ. Կ. Կ. Կ. Կոմիտեյին։ Ռ. Կ. Յե. Մ. տեղական կազմակերպությունները աշխատում են նահանգական, գավառային և շրջանային համապատասխան Ռ. Կ. Կ. կազմակերպությունների հսկողության տակ։ Ռ. Կ. Կ. հետ կապ ստեղծելու համար Ռ. Կ. Յե. Մ. օրգանները ունենում են ներկայացուցիչներ Ռ. Կ. Կ. համապատասխան օրգաններում խորհրդակցական ձայնի իրավունքով։

## Ժ. Ռ. Կ. ՅԵ. Մ. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՀԵՏ

48. Կապ և համերաշխ աշխատանք ստեղծելու համար միությունը ուղարկում է իր ներկայացուցիչները աշխատանքի պաշտպանման ու ժողովրդական լուսավորության բաժինները, պրոֆ. միությունները և այն հիմնարկությունները, վորոնց աշխատանքները կապ ունեն յերիտասարդության շահերի հետ։

49. Կուսակցական և Խորհրդային հիմնարկությունները ուղարկված ներկայացուցիչները հաշվետու յեն իրենց աշխատանքների համար. հաշվետվությունը ուղարկում են իրենց կազմակերպություններին։



## ԺԱ. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

50. Դրամական միջոցները կազմում են անդամավճարները, սուբսիդիաները և նման յեկամուտները։

51. Անդամավճարները պարտադիր են միության անդամների և թեկնածուների համար, վորի քանակը պետք է լինի 2 տոկոսը իր ստացած ամսական աշխատավարձի։

**Ծանոթ.**— Անգործները և կարմիր բանակայինները անդամավճարներից ազատվում են։

Հ. Կ. ՅԵ. Մ. ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ
ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Հ. Ազատյանի — Թեզիսներ նոր տնտեսական քաղաքականության մասին.
2. Լունաչարսկի — Ինքնազարգացման կազմակերպումը.
3. Ե. Կ. Յե. Մ. Ծրագիրը.
4. Ե. Կ. Յե. Մ. Կանոնադրությունը

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ՝

1. ԳԵՈՐԳԻՅ ԿՐԵՑԳԻԱՆԻ — Հենրիկո.
2. Պատկոմ և Սկաուտ.
3. Հ. Կ. Յե. Մ. Յերևանի Կոմիտեյի միամյա հաշվետվությունը.

ԳԻՆՆ Է 20 Կ. ՋԵՐՎՈՆ.

49
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0037286